ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԼՈՒԻԶԱ ԻՎԱՆԻ ՄԱՐԱԲՅԱՆ

ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԱԳՐԵՍԻԱՆ ՀԵՌՈՒՍՏԱԲԱՆԱՎԵՃԵՐՈՒՄ

Ժ.02.07 – «Ռոմանագերմանական լեզուներ»

մասնագիտությամբ բանասիրական գիտությունների թեկնածուի

գիտական աստիճանի հայցման համար ատենախոսության

ՄԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ 2024

Ատենախոսության թեման հաստատվել է Եվրոպական համալսարանում:

Գիտական ղեկավար՝ բ.գ.դ., պրոֆեսոր Կնյազյան Աննա Տարիելի

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ բ.գ.դ., պրոֆեսոր Սիմոնյան Արմինե Արամի
բ.գ.թ., դոցենտ Սարգսյան Մարիանա Սամվելի

Առաջատար կազմակերպություն՝ Վանաձորի պետական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2024 թվականի հուլիսի 3-ին՝ ժամը 11:00-ին, ՀՀ ԲԿԳԿ-ի Երևանի պետական համալսարանում գործող 009 «Օտար լեզուներ» մասնագիտական խորհրդի նիստում (հասցե՝ Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ԵՊՀ գրադարանում:

Սեղմագիրն առաքվել է 2024 թվականի հունիսի 1-ին:

Մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար
բ.գ.դ., պրոֆեսոր՝ Գայանե Մուրադյան

Ժամանակակից լեզվաբանության մեջ մեծ ուշադրության է արժանանում խոսքային ագրեսիայի արտահայտման գենդերային տարբերությունների ուսումնասիրությունը: Ներկայիս հասարակությունն ամենուր բախվում է խոսքային ագրեսիայի և «ատելության խոսքի» դրսևորումների հետևանքով ծագող խնդիրների: Ագրեսիայի ապակառուցողական դրսևորումը համարվում է մարդու վարքագծի, թերևս, ամենադժվար վերահսկելի կողմը: Այս առումով ագրեսիան խորը և մանրակրկիտ ուսումնասիրության կարիք ունի ոչ միայն հոգեբանական և սոցիոլոգիական մեթոդների օգնությամբ, որոնք կենտրոնանում են ագրեսիայի գործողության սուբյեկտների բացասական դիրքորոշումների, ագրեսիայի դրդապատճառների ու տեսակների վրա, այլև, անկասկած, լեզվաբանության տեսանկյունից: Սա պայմանավորված է ագրեսիայի տարբեր տեսակների և ձևերի արտահայտման լեզվական միջոցների ուսումնասիրության և խոսքային յուրահատկություններով, որոնք ի ցույց են դնում խոսքային ագրեսիան որպես ագրեսիայի հատուկ տեսակ՝ ագրեսիայի ծայրահեղ ձևերի իրականացումը ախտորոշելու և կանխելու նպատակով:

Ատենախոսության **ուսումնասիրության ոլորտը** գենդերային լեզվաբանությունը, քաղաքական խոսույթը և կոնֆլիկտաբանությունն են, իսկ ուսումնասիրության **առարկան՝** լեզվական, ոչ լեզվական և հարալեզվական միջոցներով ագրեսիայի դրսևորման առանձնահատկությունները կին և տղամարդ քաղաքական գործիչների հեռուստաբանավեճերում**:**

Գենդերային ագրեսիայի առանձնահատկությունների հետազոտության լեզվական **նյութը** ամերիկյան (մասնավորապես 2016-2022 թթ.՝ 25 կին և 40 տղամարդ գործիչների մասնակցությամբ) և եվրոպական (35 կին և 45 տղամարդ գործիչների մասնակցությամբ) քաղաքական հեռուստաբանավեճերն են**:** Վերլուծության են ենթարկվել ավելի քան 50 հեռուստաբանավեճեր, որոնցում արտացոլված են կին և տղամարդ քաղաքական գործիչների լեզվական, ոչ լեզվական և հարալեզվական միջոցները:

Ատենախոսության **նպատակը** կին և տղամարդ քաղաքական գործիչների ելույթներում և հեռուստաբանավեճերում առկա ագրեսիվ վարքի, «ատելության խոսքի», կարծրատիպային պատկերացումների, լեզվական դրսևորումների առանձնահատկությունների և հաղորդակցական ռազմավարությունների ու մարտավարությունների գենդերային տարբերությունները բացահայտելն է:

Սահմանված նպատակն իրագործելու համար առաջադրվել են հետևյալ **խնդիրները.**

1. Դիտարկել քաղաքական գործիչների խոսքային վարքի վերաբերյալ գիտական գրականության մեջ գոյություն ունեցող մոտեցումները և ճշգրտել «խոսքային ագրեսիա» եզրույթի սահմանումը:
2. Նկարագրել խոսքային ագրեսիայի ուսումնասիրման միջգիտակարգային մոտեցումը:
3. Վեր հանել գենդերային ագրեսիայի և «ատելության խոսքի» առանձնահատկությունները քաղաքական հեռուստաբանավեճերում և դիտարկել տղամարդ և կին քաղաքական գործիչների հուզազգացական վարքի դինամիկան:
4. Վերլուծել կին և տղամարդ քաղաքական գործիչների ագրեսիվ վարքագիծը լեզվական տարբեր մակարդակներում՝ բառային, ձևաբանական, շարահյուսական և ոճական:
5. Սահմանել գենդերային տարբերությունների գերակա ռազմավարությունները և էական բնութագրերը քաղաքական հեռուստաբանավեճերի ժամանակ ագրեսիա դրսևորելիս:
6. Վեր հանել կին և տղամարդ քաղաքական գործիչների ոչ խոսքային, հարախոսքային ագրեսիվ վարքի տարբերությունները քաղաքական բանավեճերում:

Հետազոտության **վարկածի դրույթներն են**.

- Կին քաղաքական գործիչներն իրենց քաղաքական ելույթներում նշանակալիորեն ավելի քիչ են խոսքային ագրեսիա դրսևորում, քան տղամարդ քաղաքական գործիչները:
- Կին քաղաքական գործիչների կողմից գործածվող խոսքային, ոչ խոսքային և հարախոսքային ագրեսիան էականորեն բացասաբար է ազդում գործչի հեղինակության վրա, մինչդեռ տղամարդ գործիչների դեպքում այն առավելապես չեզոք կամ դրական է ընկալվում:

Աշխատանքի **արդիականությունը** պայմանավորված է ժամանակակից լեզվաբանության մեջ լեզվի գործառական կողմի նկատմամբ հետաքրքրության աճով: Ավանդաբար ագրեսիվությունն ուսումնասիրվել է գրեթե առանց հաշվի առնելու սեռը: Համարվելով առաջին հերթին արական հատկանիշ՝ այն ուսումնասիրվել է գլխավորապես տղամարդկանց առնչությամբ: Մեր կարծիքով՝ արդիական է ագրեսիվության գենդերային առանձնահատկությունները համակարգային մոտեցման դիտանկյունից ուսումնասիրելը, ինչը թույլ է տալիս համալիր ձևով հետազոտել այս հատկանիշը՝ համադրելով ոչ միայն դրա տարբեր փոփոխականները, այլև դրանց միջև փոխադարձ կապերի յուրահատկությունը: Լեզվի և հաղորդակցության գենդերային հայեցակերպը դեռևս ամենաքիչ

ուսումնասիրված բնագավառն է գենդերային հետազոտությունների ընդհանուր միջգիտակարգային ոլորտում, իսկ յուրաքանչյուր նոր գաղափար կամ տեսակետ անհրաժեշտ է ապացուցել փաստերով ու գիտական նոր հետազոտություններով:

Սույն ատենախոսության **գիտական նորույթը** երեք գիտակարգերի՝ հանրամշակութաբանության, կառուցվածքային և գենդերային լեզվաբանության զուգադիր հենքի վրա խոսքային ագրեսիայի լեզվական միջոցների ուսումնասիրությունն է: Առաջին անգամ փորձ է արվում ժամանակակից գենդերային լեզվաբանության տեսանկյունից նկարագրել «ագրեսիա» հուզավիճակի, «ատելության խոսքի» իրացման գենդերային տարբերությունները: **Նորույթ** է հետազոտության օբյեկտի ընտրությունը՝ գենդերային կարծրատիպերը քաղաքական հեռուստատեսային բանավեճերում, քանի որ վերջիններս դեռևս լեզվաբանական խորը և համակարգված քննության չեն ենթարկվել: Ատենախոսության նորույթներից է նաև այն, որ նպատակ ունենալով պարզել քաղաքական հեռուստաբանավեճերի ժամանակ ագրեսիա դրսևորելիս կանանց և տղամարդկանց հուզազգացական վարքի գերակշռող հույզերը բառային և շարահյուսական մակարդակներում, բացահայտվել են խոսքի վրա սեռի հանրամշակութային հասկացույթի ազդեցության ընդհանուր օրինաչափությունները:

Հետազոտության **տեսական** նշանակությունը քաղաքական խոսույթում ագրեսիայի արտահայտչամիջոցների կիրառման գենդերային տարբերությունների հիմնախնդրի վերաբերյալ գիտելիքները խորացնելն է, «խոսքային ագրեսիա» հասկացության բովանդակությունը ճշտելն ու նշյալ հասկացությունը խոսքագործածության տեսության դիտանկյունից դիտարկելը: Թեման արժեքավոր ներդրում է ինչպես քաղաքագիտության, այնպես էլ լեզվաբանության, գենդերային տեսության, հաղորդակցության տեսության բնագավառների հետագա զարգացման համար:

Հետազոտության **գործնական** նշանակությունն այն է, որ դրա արդյունքները կարող են կիրառվել անգլերենի՝ որպես օտար լեզվի դասընթացներում, ճարտասանության, խոսույթի տեսության, գենդերային լեզվաբանության, հոգելեզվաբանության հատուկ դասընթացներում, տեքստի վերլուծության և մեկնաբանության գործնական դասընթացներում:

Լեզվաբանական վերլուծության **մեթոդների** ընտրությունը բխում է ուսումնասիրվող նյութի բնույթից ու նպատակից: Կիրառվել են հանրալեզվաբանության, հանրամշակութաբանության, ինչպես նաև էմպիրիկ հետազոտության և վիճակագրական մշակման մեթոդները՝ դիտման, համեմատման, ճանաչման, չափման, վերլուծության, որոնք հնարավորություն են ընձեռում վեր

հանելու հեռուստաբանավեճերում առկա գենդերային հասկացության բազմաշերտ կառուցվածքը:

Հետազոտության նյութի փորձաքննությունը: Ատենախոսական աշխատանքի հիմնադրույթները ներկայացվել են Հայաստանի Եվրոպական համալսարանի (ՀԵՀ) կիրառական լեզվաբանության ամբիոնի նիստերում ներկայացված զեկուցումների միջոցով, «Ավանդույթներն ու նորարարությունները մանկավարժի մասնագիտական վերապատրաստման և գործունեության մեջ» խորագրով 4 -րդ միջազգային գիտաժողովում (24-26, մարտ 2022, ՀԵՀ), «Անգլերենը Բրյուսովում. անցյալը, ներկան, ապագան» գիտաժողովում (29-30, հունիս 2022, ԵԲՀ) կարդացված զեկուցման և ակտիվ քննարկման ձևաչափով: Աշխատանքի հիմնախնդիրները քննարկվել են նաև Կառունասի համալսարանում (22, մարտ 2021):

Ատենախոսության կառուցվածքն ու բովանդակությունը պայմանավորված են վերջինիս նպատակով, առաջադրված խնդիրներով, հետազոտվող նյութի պահանջներով. այն բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, որոնք բաժանվում են ենթագլուխների և ծանոթագրությունների, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից:

Ներածության մեջ հիմնավորված են թեմայի ընտրությունը, արդիականությունն ու նորույթը, որոշարկվում են ուսումնասիրության նպատակն ու խնդիրները, տեսական և գործնական արժեքը, մեթոդաբանական հիմքերը:

Ատենախոսության առաջին գլուխը ***(«Գենդերային տեսության և հաղորդակցության հիմնախնդիրները քաղաքական խոսույթում»)*** բաղկացած է երկու ենթագլխից: Մեր հետազոտության առաջին ենթագլուխը ***(«Կանանց և տղամարդկանց հաղորդակցական վարքագծի առանձնահատկությունները քաղաքական խոսույթում»)*** նվիրված է տեսական խնդիրների քննությանը, որտեղ ներկայացվում են հաղորդակցությանը և գենդերին վերաբերող հիմնահարցերը, ինչպես նաև հետազոտվում են գենդերային տարբերությունները քաղաքական խոսույթում: Ուսումնասիրվում են մի շարք լեզվաբանների տեսակետներ (Ա. Կնյազյան, Ա. Բարանով, Ջ. Հոլմս, Ի. Ստերնին, Դ. Տաննեն, Ռ. Լակոֆ, Ռ. Ուոդակ, Ա. Չուդինով և այլք), ովքեր վերլուծում են քաղաքական խոսույթի գենդերային առանձնահատկությունները և գենդերի դերը քաղաքական խոսքում: Ընդհանուր առմամբ, *քաղաքական խոսույթը քաղաքական լեզվի բնութագրերի ամբողջությունն է, որը հանդիպում է կին և տղամարդ քաղաքական գործիչների հրապարակային ելույթներում:* Այն նպատակային լսարանի վրա ազդելու բարդ գործիք է: Լսողի վրա ավելի արդյունավետ ազդելու համար քաղաքական ելույթներում օգտագործվում են զանազան բառային, ձևաբանական, շարահյուսական և ոճական միջոցներ: Այս առումով գենդերային հայեցակերպի շրջանակներում կատարվող

ուսումնասիրությունները բավականին հետաքրքրական են, քանի որ ուշադրությունը հիմնականում կենտրոնանում է ոչ թե ընդհանուր լեզվական միջոցների վրա, այլ տղամարդկանց և կանանց լեզվական տարբերությունների:

Երկրորդ ենթագլխում ***(«Գենդերային կարծրատիպերը քաղաքական հեռուստաբանավեճերում»)*** լուսաբանվում են գենդերային կարծրատիպերը և կարծրատիպային ընկալումները: Կարծրատիպերը ըստ էության վերածվել են կանանց և տղամարդկանց վարքի չափանմուշների, որոնց շնորհիվ ստեղծվում է կանանց և տղամարդկանց միջև բարոյական փոխհարաբերությունների տիպը, որը բնորոշ է տվյալ մշակույթին[1]:

Քաղաքականության մեջ տղամարդկանց մասին ձևավորված կարծրատիպերը համապատասխանում են քաղաքական առաջնորդների ակնկալիքներին, մինչդեռ կանանց մասին ձևավորված կարծրատիպերը հակասում են այդ սպասումներին: Գոյություն ունի կարծրատիպ այն մասին, որ կին քաղաքական գործիչները *ազնիվ* են և *համակրելի*, և դրանք կարծես թե շատ արժեքավոր գծեր են քաղաքական առաջնորդների համար: Այնուամենայնիվ, շատ դեպքերում նման կարծրատիպերը ստիպում են ընտրողներին քաղաքական գործիչներին ընկալել գենդերային կարծրատիպերի զուգահեռագծերով, ուստի չեն աջակցում կին քաղաքական գործիչներին, ովքեր չունեն տղամարդկային կարևոր որակներ: Տղամարդկանց մեծ մասը *գերիշխում է շփման մեջ*, ավելի մեծ հնարավորություն ունի արտահայտվելու՝ զանազան լեզվական միջոցներ օգտագործելով: Կանանց վերագրվող հատկանիշներից են՝ *համեստությունը, հարգանքը, կարեկցանքը, քաղաքավարությունը*: Նրաք չունեն հրապարակային խոսքի հմտություններ: Քաղաքական հեռուստաբանավեճերը աչքի են ընկնում ուշագրավ մի առանձնահատկությամբ. տղամարդիկ ավելի երկար են խոսում, քան կանայք, թեպետ ժամանակակից հասարակության մեջ դեռ տարածված է այն կարծրատիպը, թե կանայք միշտ ավելի շատ են խոսում, քան տղամարդիկ: Տղամարդիկ բնութագրվում են ագրեսիվ, անմիջական, ինքնավստահ, խիստ, բռի, իսկ կանայք համարվում են հանգիստ, նրբանկատ, շատախոս: Քաղաքական հաղորդակցության մեջ տղամարդիկ ավելի հաճախ են հանդես գալիս որպես *ագրեսիայի անմիջական նախաձեռնողներ,* մինչդեռ կանայք ավելի զգայուն ու կարեկցող են:

---

[1]Կնյազյան Ա. Լեզու և գենդեր: ԵՊՀ հրատ., Երևան, 2018, 210 էջ:

Երկրորդ գլուխը վերնագրված է (***«Ագրեսիայի դրսևորման գենդերային առանձնահատկությունները քաղաքական բանավեճերում»)*** և բաղկացած է երկու ենթագլխից: Այս գլխի առաջին ենթագլխում ***(«Գենդերային ագրեսիան որպես սոցիալական վարքի տարատեսակ»)*** հանգամանորեն ուսումնասիրվում և մեկնաբանվում է խոսքային ագրեսիան, որը տարբերվում է ուժգնությամբ և արտահայտման ձևով՝ հակակրանքի և չարամտության արտահայտումից մինչև «ատելության խոսք»: «Խոսքային ագրեսիա» եզրույթը մեկնաբանվում է որպես *անբարյացակամության, թշնամանքի խոսքային ձևերի արտահայտություն, խոսքի միջոցներով որևէ մեկի ինքնասիրության կամ արժանապատվության ոտնահարում*[2]: Ընդհանուր առմամբ, ագրեսիան ուսումնասիրվել է միայն որպես տղամարդկային բնութագիր, և ընդունված է այն տեսությունը, որ տղամարդիկ ավելի ագրեսիվ են, քան կանայք[3]: Վերոնշյալը դիտարկվում է ամերիկյան հեռուստաբանավեճերում և փորձ է արվում պարզել կին և տղամարդ քաղաքական գործիչների ագրեսիվ խոսքային վարքի տեսակները և առանձնահատկությունները: Պետք է նշել, որ բանավեճերին մասնակցող կանայք փորձառու քաղաքական գործիչներ են, ովքեր հաճախ են պայքարում իրենց տղամարդ գործընկերների վրա ազդելու և իրենց խոսքը լսելի դարձնելու համար: Օրինակ, սենատոր Էլիզաբեթ Ուորենը կիրառում է սուր և հեգնական արտահայտություններ հակառակորդին խայթելու և սադրելու համար. "*Mr. Bloomberg, it's not just about the offensive remarks you've made—it's about the* ***toxic culture*** *you've fostered. Multiple women have come forward with allegations of* ***discrimination and harassment*** *at your company. You can't simply* ***buy your way into the presidency*** *and expect us to ignore the* ***pain and suffering you've caused.*** *Your history of* ***sexism and misogyny disqualifies you*** *from leading our party. We need a candidate* ***who respects women, not someone who sees them as disposable objects.*** *Your behavior is unacceptable, and I won't stand by silently while you try* ***to buy this election****."* Էլիզաբեթ Ուրենը օգտագործում է մեծ թվով *գործիքային ագրեսիա*, մինչդեռ Մայքլ Բլումբերգը կիրառում է *թշնամական ագրեսիա*: Որքան էլ նա փորձում է առերևույթ հանգիստ ձևանալ, երբ Էլիզաբեթ Ուորենը վիրավորում է նրան, այնուամենայնիվ ոչ միշտ է տիրապետում իրեն, սկսում է զայրանալ, հարձակվել և անհեթեթ արդարացումներ

---

[2]Кожина М.Н. Энциклопедический Словарь русского языка. Издательство Наука. Москва, 2011. 696 с.

[3]Richardson D., Green L. Social sanction and threat explanations of gender effects on direct and indirect aggression. Aggressive Behaviour. 1999, 25. p. 425–434.

բերել. "*None of them accused me of doing anything other than* ***maybe they didn't like a joke I told.*** *These are agreements between two parties that* ***wanted to keep it quiet****, and that's up to them"* [4]: Սենատոր Մայքլ Բեննեթը նույնպես հարձակման է անցնում՝ կասկածի տակ դնելով իր հակառակորդի բանակցային հմտությունները: Նա մեծ չափով *թշնամական ագրեսիա* է կիրառում սուր սպառնալիքներին արձագանքելու համար. "*Sometimes* ***you do have to beat them,*** *but the deal that he talked about with Mitch McConnell was a complete victory for the Tea Party":* Իսկ Մարիան Ուիլյամսոնը կիրառում է *միտումնավոր ագրեսիա*. "*What Donald Trump has done to these children,* ***it is kidnapping****. If you* ***forcibly take a child from their parents' arms, you are kidnapping*** *them":*

Գենդերային ագրեսիայի այս տեսակների վերլուծության արդյունքում բացահայտվում է, որ թե՛ կանայք և թե՛ տղամարդիկ կիրառում են *թշնամական ագրեսիա* մեկնաբանումից խուսափելու համար: Մյուս կողմից էլ կանանց ավելի բնորոշ է *գործիքային և վերաբերական ագրեսիան*՝ մտաշահարկման միջոցով հակառակորդին վնասելու համար, իսկ տղամարդկանց հատուկ է *թշնամական և սոցիալական ագրեսիան*՝ սուր սպառնալիքներին արձագանքելու և սոցիալական կարգավիճակ ձեռք բերելու համար[5]:

Հեռուստաբանավեճերում շատ են նաև **ընդհատումները,** որոնք ենթադրում են *գերակայություն, ագրեսիա, սպառնալիք և անհամաձայնություն*: Հաղորդակցական ռազմավարությունների համատեքստում իրականացված ուսումնասիրությունները մեծամասամբ ցույց են տալիս, որ բանավեճերում հիմնականում տղամարդիկ են ընդհատում և գերակայում[6]:

Այսուհանդերձ, մեր վերլուծությունները ցույց են տալիս, որ հատկապես վերջին տարիների բանավեճերի ժամանակ կանայք բավականին ինքնավստահ են, նպատակասլաց են և կարողանում են վերահսկել ու առաջ մղել քննարկվող թեմաները: Ուշագրավ է հատկապես Դեմոկրատական կուսակցության անդամ Քամալա Հարիսի կատարած արտահայտությունը բանավեճի ժամանակ, երբ նա

---

[4]NBC News Democratic Debate in Las Vegas 2020.https://www.youtube.com/watch?v=TZkV0ISxcQY (20.02.2020)

[5] Knyazyan A., Marabyan L. The gender aspect of political discourse (manifestation of verbal aggression). Science and Education a New Dimension, Budapest, 2021, IX (76), p. 32-35.

[6] Zimmerman D., West C. Sex roles, interruptions and silences in conversation. In Thorne, B. and Henley, N. Language and Sex: Difference and Dominance. Rowley: Newbury House. 1975. p. 105-129.

Հանրապետական կուսակցության անդամ՝ Մայք Փենսի ընդհատմանը ժպտալով պատասխանում է. *“Mr Vice-President, **I'm speaking**… If you don't mind **letting me finish**, then we can have a conversation”* [7]: Քամալա Հարիսը երեք անգամ նույն ոճով պատասխանում է իրեն ընդհատելու համար. *“I'm speaking”:* Մեկ այլ դրվագում նա ասում է. *“He interrupted me, and **I'd like to just finish**, please”*: Կարելի է ենթադրել, որ նա հստակ պատրաստվել է ընդհատումների համար՝ մարտավարություն ընտրելով ներդաշնակ հարաբերությունների պահպանումը, միևնույն ժամանակ ընդգծելով իր առաջնորդող դիրքը[8]: Հաշվի առնելով գենդերային անհավասարությունը՝ իրենց խոսքը լսելի դարձնելու և նպատակին հասնելու համար կանայք կիրառում են ընդհատման բոլոր տեսակները՝ **զուգահեռ խոսք, միջամտություն, խանգարող խոսք, լուռ ընդհատում, պարզ ընդհատում** (տե՛ս գծապատկեր 1):

Կանանց և տղամարդկանց խոսքի ընդհատումների վիճակագրական տվյալները ներկայացվում են գծապատկերի տեսքով [9]:

Գծապատկեր 1. Կանանց և տղամարդկանց խոսքի ընդհատումները ըստ տեսակների



[7] Vice President Mike Pence and Sen. Kamala Harris https://www.youtube.com/watch?v=Q_CEb3dRqw (08.10.22)

[8] Մարաբյան Լ. Գենդերային խոսքային առանձնահատկությունները քաղաքական բանավեճերում: ՀԵՀ Գիտական հոդվածների ժողովածու, Երևան, 2021, 12(01), էջ 418-426:

[9] Այս և բերված բոլոր գծապատկերները և աղյուսակը Լ. Մարաբյանի:

Երկրորդ ենթագլխում ***(«Կին և տղամարդ քաղաքական գործիչների ագրեսիվ խոսքային վարքի լեզվական առանձնահատկությունների դրսևորումները հեռուստաբանավեճերում»)*** ամերիկյան հեռուստաբանավեճերի բովանդակային վերլուծության հիման վրա վեր են հանվում կին և տղամարդ քաղաքական գործիչների ագրեսիվ խոսքային վարքի առանձնահատկությունների լեզվական (շարահյուսական, ոճական, ձևաբանական) և բառային միջոցների դրսևորումները: Կին և տղամարդ քաղաքական գործիչները հաճախ են գործածում **քննադատական բառեր** *(hiding his tax returns…; the most corrupt president…; supporting racist policies…; arrogant billionaire…; nondisclosure agreements…; has the blood of the Kurds on his hand… և այլն),* **կոչ անող արտահայտություններ** *(I believe in Democratic socialism for working people...; Not billionaires. Health care for all.....; Educational opportunity for all..... և այլն)* և **բացասական երանգավորմամբ բառապաշար** (*fat broads and horse-faced lesbians....; dishonest, incompetent, vain.....; The policy was abhorrent...; Democrats take a huge risk if we just substitute one arrogant billionaire for another....; This president has unleashed racism and xenophobia....; We have a predator living in the White House.... և այլն)* [10]:

Կոչ անող արտահայտությունները կարող են հզոր գործիքներ լինել հռետորաբանության մեջ, քանի որ դրանք զանազան հույզեր են հաղորդում, ընդգծում են խնդիրների սրությունը և առաջացնում վրդովմունքի կամ մտահոգության զգացում: Գենդերային առումով դրանք գերակշռում են կանանց խոսքում: Հեռուստաբանավեճերում գործածվող քննադատական և բացասական երանգավորմամբ բառապաշարը կիրառվում է՝ շեշտելու քաղաքական գործչի բացասական բնութագիրը, քննադատում և հեգնում նրանց գործողությունները: Տղամարդ քաղաքական գործիչները իրենց խոսքում համեմատաբար ավելի շատ քննադատական և բացասական երանգավորմամբ բառեր են օգտագործում, քան կանայք: Այնուամենայնիվ, լեզվական նյութի վերլուծությունը ցույց է տալիս, որ հեռուստաբանավեճերում կանայք ևս գործածում են նման բառապաշար հակառակ սեռի ներկայացուցիչների հետ հաղորդակցվելիս: Նրանք ոչ միայն վճռական են, վստահ կամ աչքի ընկնող, այլև բնավ չեն վախենում անհրապույր և կոպիտ ընկալվելուց: Նրանց խոսքը **նպատակային է, հիմնավորված** և **վերահսկվող:**
Ագրեսիայի արտահայտումը խոսքում կարող է փոխանցվել ոչ միայն բառապաշարով, այլև շարահյուսական և ոճական տարբեր միջոցներով: Վերլուծությունը ցույց է տալիս, որ տղամարդ քաղաքական գործիչները կիրառում են **համեմատություն**, որպեսզի ընդգծեն վարքի և արժեքների տարբերությունները՝ նպատակ ունենալով ոտնահարել հակառակորդի արժանապատվությունն ու ինքնասիրությունը *(I will beat him* ***like a drum*** *- Ջո Բայդեն; You know, maybe leading a diverse city that was facing ruin doesn't sound* ***like the arena to you*** *-*Փիթ Բուտիջիչ; *A corrupt political system, bought by* ***billionaires like Mr. Bloomberg****-* Բերնի Սանդերս և

այլն): Կին քաղաքական գործիչները համեմատությունը օգտագործում են խոսքը ավելի ազդեցիկ դարձնելու նպատակով (*Supporting racist policies* ***like redlining and stop and frisk*** - Էլիզաբեթ Ուորենն*; Our healthcare system is* ***like a broken machine,*** *leaving millions without access to care*- Մարիան Ուիլյամսոն; *Our nation is* ***like a family in crisis***-Քիրստեն Գիլիբրենդ և այլն):

Մեր լեզվական նյութում **կրկնությունների** վերլուծությունը գենդերային մոտեցմամբ ցույց է տալիս, որ տղամարդիկ ավելի հաճախ են գործածում զանազան կրկնություններ, քան կանայք: Նրանց խոսքում գերակշռում են **բացասական հետևանքները շեշտող կրկնությունները** (***You got*** *the disastrous war in Iraq done.* ***You got*** *a bankruptcy bill, which is hurting middle class families all over this country.* ***You got*** *trade agreements like NAFTA.... և այլն);* **հուզական երանգավորմամբ կրկնությունները** *(……****to thank*** *so many people from all over this country, I just want* ***to thank*** *you from the bottom of my heart, and I'm so happy to be back here with you this evening և այլն):* Քաղաքական հեռուստաբանավեճերում, ինչպես երևում է, կրկնության հաճախակի կիրառումը տղամարդկանց խոսքում կարող է բացատրվել մի կողմից՝ իրենց գաղափարներն ավելի վստահ պնդելու և ավելի ուժեղ ազդեցություն գործելու, մյուս կողմից՝ հանդիսատեսին որոշակի տեսակետ կամ դիրքորոշում ընդունել համոզելու ձգտմամբ: Մինչդեռ կին քաղաքական գործիչները կրկնությունը օգտագործում են իրենց լսարանի հետ ավելի հուզական կապ հաստատելու համար (***Go for something*** *little****, go for something*** *small,* ***go for something*** *that..... I said, no, let's* ***go for*** *an agency…..,; I am* ***deeply grateful*** *to President Obama, and I am* ***deeply grateful*** *to every single person և այլն):* Այն օգնում է նրանց ավելի անկեղծ և համոզիչ հանդես գալու:

Մեր կողմից վերլուծված հեռուստաբանավեճերում **փոխաբերությունների** գործածությունը կանանց խոսքում քանակապես գերազանցում է տղամարդկանց խոսքում եղածներին: Օրինակ, "*we really need to address* ***the elephant in the room****" - «փիղը սենյակում»* արտահայտությունը փոխաբերաբար օգտագործելը ընդգծում է էական, չլուծված խնդրի գոյությունը*, "This president has* ***ripped the soul out of this country****",* որն արտահայտում է խիստ դժգոհություն և քննադատություն, իսկ *"America does not want to witness a food fight, they want to know how we are going to* ***put food on their table****"* մատնանշում է գործնական մտահոգությունները լուծելու և ավելորդ կոնֆլիկտներից խուսափելու կարևորությունը:

---

[10]2020 Democratic Party presidential debates
https://en.wikipedia.org/wiki/2020_Democratic_Party_presidential_debates (25.03.2024)

Մեր լեզվական նյութում **հարցական նախադասությունների** քննությունը գենդերային մոտեցմամբ ցույց է տալիս, որ կանայք ավելի հաճախ են գործածում զանազան հարցադրումներ վիճարկելու հակառակորդի դիրքորոշումը. "*Are you trying to say that I'm dumb, or are you mocking me?"*-Էմի Քլոբուշար*; "What would you say to the families struggling to make ends meet in the current economy"*-Թուլսի Գաբարդ*:*

Հեռուստաբանավեճերում գենդերային տեսանկյունից քննության են ենթարկվել նաև **պայմանական նախադասությունները,** որոնք ստեղծում են հակասություն՝ ընդգծելով առաջարկների դրական արդյունքներն ընդդեմ հակառակորդի ծրագրերի բացասական հետևանքների: Պայմանական նախադասությունները մեծ մասամբ կանանց խոսքում են հանդիպում. **"***If I'm president, I will end these regime change wars; if I were a president, I would make sure that we stop supporting terrorists like al Qaeda in Syria"*-Թուլսի Գաբարդ; "*If we address the root causes of poverty, we can create a more just, equitable society where everyone has the opportunity to thrive"*-Մարիան Ուիլյամսոն*:*

Ինչ վերաբերվում է **հռետորական հարցերով** արտահայտվող գենդերային տարբերություններին, ապա ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հեռուստաբանավեճերում տղամարդիկ օգտագործում են հռետորական հարցերը՝ նպատակ ունենալով վիրավորել և նվաստացնել հակառակորդին. "*What is an endless war if it's not a regime change war?"*-Փիթ Բութիջիչ; "*Can we really say we are a nation of justice when our criminal justice system disproportionately targets people of color?"*-Քորի Բուքեր:

Ուսումնասիրված լեզվական նյութի հիման վրա կարելի է ենթադրել, որ հեռուստաբանավեճերում, ըստ գենդերային գործոնի, ագրեսիա պարունակող բառային, ոճական և շարահյուսական միջոցների իրացման քանակական տարբերությունները այդքան էլ մեծ չեն կանանց և տղամարդկանց խոսքում: Մեր կողմից դիտարկված ***զայրույթի, զարմանքի, տագնապի և անհանգստության*** հուզավիճակներում երկու սեռի ներկայացուցիչներն էլ օգտագործում են մեծ թվով քննադատական բառեր, կրկնություններ, կոչ անող արտահայտություններ, հռետորական հարցեր, փոխաբերություններ, համեմատություններ և այլն:

Խոսքային մակարդակում քաղաքական գործիչների գենդերային ագրեսիայի առանձնահատկությունների վիճակագրությունը ներկայացվում է աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1. Կին և տղամարդ գործիչների խոսքային ագրեսիայի դրսևորումները

Քաղաքական գործիչ								
	Մայքլ Բլումբերգ	**Էլիզաբեթ Ուորեն**	**Բերնի Սանդերս**	**Ջո Բայդեն**	**Փիթ Բութիջիչ**	**Քամալա Հարիս**	**Թուլսի Գաբարդ**	**Էմի Քլոբուշար**
Շեշտադրված խոսք	-	+	+	+	+	+	-	+
Համոզիչ խոսք	+	+	+	+	+	+	+	+
Նպատակա-ուղղված խոսք	+	+	+	+	+	+	+	+
Վերահսկողական խոսքային վարք	+	+	+	+	+	+	+	+
Քննադատա-կան խոսք	-	+	+	+	+	+	+	+
Հռետորական խոսք	-	+	+	-	+	+	-	+
Վարկաբեկիչ խոսք	-	+	+	+	+	-	+	-

Երրորդ գլուխը (***«Խոսքային, ոչ խոսքային և հարախոսքային ագրեսիայի դրսևորումները քաղաքական հեռուստաբանավեճերում»***) բաղկացած է երկու ենթագլխից:

Առաջին ենթագլխում (**«Գենդերային տարբերությունների դրսևորումը «ատելության խոսքում»**) քննարկվում են տարբեր երկրներում և մշակույթներում քաղաքական հեռուստաբանավեճերի ժամանակ «ատելության խոսք» պարունակող տարատեսակ ձևեր, մասնավորապես՝ *գռեհիկ բառերի գործածություն, վիրավորական և հեգնական հարցադրումներ, ծաղրանք, ցինիզմ, քննադատություն, սպառնալիք:* Վերջին շրջանում տղամարդ և կին քաղաքական գործիչների խոսույթում, քաղաքական բանավեճերում, հանրային ելույթներում ավելի հաճախակիացել է «ատելության խոսքը», որը հանգեցնում է ընդհուպ միջպետական հարաբերությունների լարմանը կամ նպաստում քաղաքական դաշտում անառողջ մթնոլորտ ձևավորելուն: Որպես օրինակ հիշարժան է այն դեպքը, երբ Շոտլանդական ազգային կուսակցության անդամ Մահիրի Բլեքը Բրիտանական խորհրդարանում բարձրաձայն կարդում է իրեն ուղղված «ատելության խոսքը». *"I struggle to see any joke in being systematically called* ***a dyke, a rug-muncher, a slut, a whore, a scruffy bint.*** *I've been*

told you can't ***put lipstick on a pig****, let* ***the dirty bitch each shit*** *and die, and you're left reading them on my screen every day -* ***she needs a kick in the cunt, guttural cunt, ugly cunt, wee animal cunt"***[11] (տե՛ս գծապատկեր 2):

Բրիտանացի քաղաքական գործիչ Լիզ Թրասն «ատելության խոսքի» դրսևորմամբ աչքի է ընկնում Մեծ Բրիտանիայի վարչապետի նախընտրական քարոզարշավի և հեռուստաբանավեճի ժամանակ, որտեղ նրա հիմնական հակառակորդը ծագումով փենջաբցի հնդիկ Ռիշի Սունակն է: Նա անում է մի շարք հայտարարություններ, որոնք ատելություն և թշնամանք են արտահայտում. *"We* ***will squeeze Putin's regime…..;*** *We will continue to* ***impose harsh sanctions….;*** *I* ***will go further*** *as Prime Minister by doing everything possible – including* ***declassifying more intelligence"*** *և այլն*[12]: Ռիշի Սունակի խոսքը ևս չափազանց *ագրեսիվ* է և *մեղադրող*: Նա առիթը բաց չի թողնում Թրասին մեղադրելու սխալ հայտարարություններ անելու համար և հանդես է գալիս *խայթիչ* ու *հեգնական արտահայտություններով. "Liz has been on a journey as well…. we could put forward something called the National Security and Investment Bill. And that gives us the powers as a country* ***to protect ourselves against countries like China,*** *who are trying to infiltrate our companies* ***and steal our technology.*** *That's what we need to do. But we also need* ***to stand up for our values****".* Պետք է ասել, որ Լիզ Թրասը հանդես է գալիս ավելի հավասարակշռված և ծանրակշիռ խոսքով, քան Սունակը, որն ամեն կերպ փորձում է վարկաբեկել և տապալել Թրասին:

Կին և տղամարդ քաղաքական գործիչների քաղաքական ելույթներում առկա «ատելության խոսքի» դրսևորումների վիճակագրական տվյալները ներկայացվում են գծապատկերի տեսքով:

Գծապատկեր 2. «Ատելության խոսքի» դրսևորման դրդապատճառները տղամարդ և կին քաղաքական գործիչների խոսքում



[11]Mhairi Black Is The First MP to use the C-Word In Parliament/Metro.co.uk https://www.youtube.com/watch?v=f9lc2kkj9WA (07.03.2018)

[12]The Guardian, Truss and Sunak trade blows in acrimonious first TV debate – https://www.theguardian.com/politics/2022/jul/25/truss-sunak-trade-blows-tv-debate-tory-leadership (25. 07. 2022)

Երկրորդ ենթագլխում **(«Ագրեսիվ ոչ խոսքային և հարախոսքային վարքի գենդերային բնութագրերը»)** հետազոտության են ենթարկվում կին և տղամարդ քաղաքական գործիչների ագրեսիվ ոչ խոսքային և հարախոսքային վարքագծերում առկա տարբերությունները:

Հաղորդակցության **ոչ խոսքային մակարդակում** քննարկվում են *շարժաբանության (կինետիկ) միջոցները (դիմախոսությունն ու ժեստերը), շոշափողական միջոցները՝ ձեռքսեղմում, համբույր, գրկախառնություն, հպում, ուսին կամ մեջքին թփթփացնել* [13]:

Հարախոսքային մակարդակում ուսումնասիրվում են *ձայնի ուժգնությունը (շշուկը, բղավոցը), լռությունը, դադարը, ծիծաղը, քմծիծաղը,* որոնց օգնությամբ հաղորդվում են այնպիսի հիմնական հույզեր, ինչպիսիք են՝ *ուրախությունը, վախը, թախիծը, զայրույթը, զարմանքը* [14]:

Մեր աշխատանքում լեզվական նյութն ուսումնասիրելիս նկատել ենք, որ քաղաքական բանավեճերում ոչ խոսքային միջոցներ կիրառելիս շեշտը հիմնականում դրվում է շարժաբանական բաղադրիչների (դիմախոսության և ժեստերի) նկարագրման վրա: Օրինակ, հեռուստաբանավեճերում *ձեռքի անհանգիստ շարժումներով* ժեստերը տղամարդկանց բնութագրում են ագրեսիվ և կոշտ, իսկ կանանց *ձեռքի անհանգիստ շարժումները* օգտագործվում են որոշ գաղափարների նկատմամբ հակադիր կեցվածքն ընդգծելու համար: Կանանց բնորոշ ժեստ է *գլխի շարժումը,* որն օգտագործվում է ընդգծելու խոսքի կարևորությունը: Տղամարդկանց գլխի շարժումները մեկնաբանվում են որպես անհամաձայնության արտահայտություն:

Հեռուստաբանավեճերում *դեմքի ագրեսիվ արտահայտության* դրսևորում նկատել ենք առավելապես տղամարդկանց վարքում, որը խորհրդանշում է մարտահրավեր նետելու պատրաստակամություն: Կանանց դիմախոսական դրսևորումներում գերիշխողը *աչքերի արտահայտությունն* է, որոնցում ակներև են ինքնավստահությունն ու գերակայելու ցանկությունը (*տե՛ս գծապատկեր 3*):

Հարախոսքային վարքում առանձնացվել են ձայնի և տոնի նկարագրերը, ժպիտը, քմծիծաղը, դադարը և զայրույթի հույզի հարախոսքային արտահայտությունը: Հեռուստաբանավեճերում տղամարդիկ *ժպիտը և քմծիծաղը* ծառայեցնում են ինքնավստահ և համոզիչ երևալուն, իսկ կանայք ժպիտն ու

---

[13] Կնյազյան Ա. Անգլիական երգիծական խոսույթի գենդերային հայեցակերպը: Դոկտորական ատենախոսություն, Երևան, 2016, 328 էջ:

[14] Կնյազյան Ա. Լեզվական և հանրամշակութային գենդերային դրսևորումները անգլիական երգիծական խոսույթում: ԵՊՀ հրատ., Երևան, 2022, 237 էջ:

քմծիծաղն օգտագործում են չհամաձայնելու, չհավատալու, չվստահելու և քաղաքավարի առարկելու համար (*տե՛ս գծապատկեր 4*):

Վերլուծությունները ցույց են տալիս, որ հաղորդակցությունն անդադար խոսք չէ, այլ նաև լռություն կամ դադար: Հեռուստաբանավեճերում կանայք կիրառում են *դադար՝* կոշտ հարցադրումներին ռազմավարական պատասխաններ տալու և ուղերձի շուրջ ակնկալիքի և կարևորության զգացում ստեղծելու համար: Տղամարդիկ կիրառում են խոսքի *դադար՝* հանդիսատեսի ուշադրությունը գրավելու և իրենց ուղերձի դրամատիզմն ու ազդեցությունը մեծացնելու համար:

Ոչ լեզվական և հարալեզվական միջոցները ուսումնասիրվել են նաև կանադական քաղաքական գործիչների ելույթներում: Բանավեճի մասնակիցներն են Աննամի Փոլը, Իվ Ֆրանսուա Բլանշետը, Ջասթին Թրյուդոն, Էրին Օ'Թուլը և Ջագմիթ Սինգիը: Աննամի Փոլի դիմախոսական դրսևորումներում գերիշխողը **աչքերի արտահայտությունն** է, որոնցում ակներև են ինքնավստահությունն ու գերակայելու ցանկությունը: Թերևս ամենահիշվող պահն այն է, երբ նա ընդհատում է Իվ Ֆրանսուա Բլանշետին, մեկնում աջ ձեռքը և առանց նրան նայելու ասում. *"This is my time, sir"*: Իվ Ֆրանսուա Բլանշետը Աննամի Փոլի դիտողությանը քմծիծաղով պատասխանում է. *"It's a nice time to insult people"*: Փոլը ժպիտով արձագանքում է. *"That was not an insult. It was an invitation to get educated"*[15] :

Ոչ խոսքային և հարախոսքային մակարդակում գենդերային առանձնահատկությունների վիճակագրությունը ներկայացվում է գծապատկերներ 3, 4-ում :

Գծապատկեր 3. Ոչ խոսքային միջոցները կին և տղամարդ գործիչների խոսքում



[15]Canada election 2021. English-language federal leaders' debate https://www.youtube.com/watch?v=Tr_CwDsQzg8 (10.09.2021)

Գծապատկեր 4. Հարախոսքային միջոցները կին և տղամարդ գործիչների խոսքում



Այսպիսով, ուսումնասիրության արդյունքները թույլ են տալիս կատարել հետևյալ **եզրակացությունները**.

1. Խոսքային ագրեսիան իրականացվում է քաղաքական գործչի կողմից որոշակիորեն ընտրված հաղորդակցական ռազմավարությունների և մարտավարությունների միջոցով:

2. Հաշվի առնելով գենդերային անհավասարությունը՝ իրենց խոսքը լսելի դարձնելու և նպատակին հասնելու համար կանայք կիրառում են ընդհատման բոլոր տեսակները՝ *զուգահեռ խոսք* ***(55%),*** *միջամտություն* ***(45%),*** *խանգարող խոսք* ***(35%),*** *լուռ ընդհատում* ***(55%),*** *պարզ ընդհատում* ***(60%):***

3. Քաղաքական բանավեճերում կին և տղամարդ գործիչները կիրառում են խոսքայի ագրեսիայի որոշ տեսակներ, ինչպիսիք են՝ *թշնամական* ***(S-60%, Կ-40%)***՝ մեկնաբանումից խուսափելու, սուր սպառնալիքներին արձագանքելու, սադրելու և խայթելու համար, *գործիքային* ***(S-40%, Կ-60%)***՝ մանիպուլյացիայի միջոցով հակառակորդին վնասելու համար, *սոցիալական* ***(S-70%, Կ-30%)***՝ իջեցնելու ինքնագնահատականը կամ սոցիալական կարգավիճակը *և վերաբերական* ***(S-50%, Կ-50%)***՝՝ մարդկանց միջև եղած հավասար հարաբերությունները վարկաբեկելու համար:

4. Ագրեսիա արտահայտելու հիմնական **ձևաբանական** և **շարահյուսական միջոցներն** են. *ուժգնացնող ածականները* ***(S-40%, Կ-60%),*** որոնք խոսքը առավել հիշվող և ազդեցիկ են դարձնում, *պայմանական նախադասությունները* ***(S-35%, Կ-65%)***՝ գաղափարները պնդելու, ինչպես նաև փոխանցելու իր դիրքորոշման լրջությունը, *հարցական նախադասությունները* ***(S-60%, Կ-40%)***՝ վիճարկելու հակառակորդի դիրքորոշումը և ընդգծելու նրա փաստարկների թույլ կողմերը, *պարզ նախադասությունները* ***(S-40%, Կ-60%),*** որոնք մեծացնում են ուղերձի հստակությունը և նպատակ ունեն ներգրավել ավելի լայն լսարան, *հռետորական հարցերը* ***(S-60%, Կ-40%),*** որոնց միջոցով բանախոսը ընդգծում է խնդրի հրատապությունը և կարևորությունը:

5. Խոսքային ագրեսիայի ամենատարածված ոճական միջոցներն են. *կրկնությունները՝ բացասական հետևանքները շեշտող կրկնությունները, զուգահեռություն ստեղծող կրկնությունները, հուզագնահատողական բաղադրիչով կրկնությունները* ***(Կ-40%, Տ-60%),*** *համեմատությունները* ***(Կ-45%, Տ-55%)****, ծաղրը* ***(Կ-40%, Տ-60%),*** որն ուղղված է ոտնահարելու հակառակորդի արժանապատվությունն ու ինքնասիրությունը, *փոխաբերությունները* ***(Կ-55%, Տ-45%),*** որոնք օգտագործվում են հատկապես կանաց խոսքում խոսքը ավելի պատկերավոր, հիշվող և ազդեցիկ դարձնելու համար:

6.Քաղաքական հեռուստաբանավեճերում հաճախ են հանդիպում *«ատելության խոսքի»* զանազան դրսևորումներ: Մեծ մասամբ այն իրականացվում է բառային մակարդակի խոսքային միջոցներով: Այս մակարդակում ամենատարածված միջոցներն են՝ *բացասական երանգավորմամբ բառապաշարը* ***(Տ-60%, Կ-40%),*** *խոսակցական ցածր ոճի բառապաշարն ու անպարկեշտ արտահայտությունները* ***(Տ-70%, Կ-30%),*** ինչպես նաև *վիրավորական անվանարկումները*, քանի որ դրանք թույլ են տալիս ավելի հստակորեն դիմառնել հասցեագրողի ագրեսիվ տրամադրվածությանը ***(Տ-70%, Կ-30%),*** *ուժգնացնող բառերը* ***(Տ-40%, Կ-60%),*** *քննադատող բառերը* ***(Տ-60%, Կ-40%),*** *կոչ անող արտահայտությունները* ***(Տ-45%, Կ-55%):***

7. Ամերիկացի և Եվրոպացի տարբեր քաղաքական գործիչների քաղաքական ելույթների ժամանակ կին և տղամարդ քաղաքական գործիչները կիրառում են հակառակորդին *վարկաբեկելու* ***(Տ-65%, Կ-35%),*** *համոզիչ երևալու* ***(Տ-55%, Կ-45%),*** *գերիշխելու* ***(Տ-70%, Կ-30%),*** *լսարանին գրավելու* ***(Տ-40%, Կ-60%),*** *մեղադրելու* ***(Տ-60%, Կ-40%),*** *անձնական կարգավիճակը բարձրացնելու* ***(Տ-65%, Կ-35%)****, սեփական իրավացիությունը հռչակելու* ***(Տ-70%, Կ-30%)*** ռազմավարությունները*:*

8. Տղամարդ քաղաքական գործիչների ելույթներում ավելի հաճախ են ի հայտ գալիս ոչ լեզվական և հարալեզվական միջոցներով ագրեսիայի զանազան դրսևորումներ: Ագրեսիայի արտահայտման **հարալեզվական** միջոցներից առանձնացվել են *ժպիտը* ***(Կ-55%, Տ-45%)****, քմծիծաղը* ***(Կ-55%, Տ-45%)****, բղավոցը* ***(Կ-30%, Տ-70%)****, դադարը, լռությունը* ***(Կ-40%, Տ-60%)****,* որոնց օգնությամբ հեշտությամբ հաղորդվում են այնպիսի հիմնական հույզեր ու հուզավիճակներ, ինչպիսիք են վախը, զայրույթը, ուրախությունը, թախիծը, զարմանքը, անհանգստությունը, ինքնավստահությունը: Հաղորդակցության **ոչ խոսքային մակարդակում** հաճախ օգտագործվում են *գլխի շարժումները*

(Կ-60%, Տ-40%), *աչքերի արտահայտությունը (Կ-55%, Տ-45%)*, *ձեռքի անհանգիստ շարժումները (Կ-40%, Տ-60%)*, *դեմքի ագրեսիվ արտահայտությունը (Կ-30%, Տ-70%)*:

Հետազոտության ընթացքում առաջ է քաշվել այն վարկածը, ըստ որի՝ կին քաղաքական գործիչներն իրենց քաղաքական ելույթներում համեմատաբար ավելի զուսպ և հավասարակշռված են, քան տղամարդ քաղաքական գործիչները: Կին և տղամարդ քաղաքական գործիչների քաղաքական ելույթների և բանավեճերի բազմակողմանի ու խորքային վերլուծության արդյունքում հանգել ենք այն եզրակացության, որ վերոնշյալ վարկածը ոչ միանշանակ է, հետևաբար նաև չի հաստատվել:

Ատենախոսության հիմնադրույթներն արտացոլված են հետևյալ հրապարակումներում.

1. Ոչ խոսքային հաղորդակցության գենդերային առանձնահատկությունները քաղաքական հեռուստաբանավեճերում: Բանբեր, Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան, «Լինգվա»հրատ. Երևան, 2021, 1 (56), էջ 152-160:
2. Գենդերային խոսքային առանձնահատկությունները քաղաքական բանավեճերում: Եվրոպական Համալսարանի գիտական հոդվածների ժողովածու, ՀԵՀ հրատ., Երևան, 2021, 12(01), էջ 418-426:
3. The gender aspect of political discourse (manifestation of verbal aggression). Philology, Science and Education a New Dimension, Budapest, 2021, IX (76), p. 32-35 (համահեղինակ՝ Ա. Կնյազյան):
4. Ընդհատումը որպես գենդերային ագրեսիայի դրսևորման ձև եվ հաղորդակցական ռազմավարություն (ԱՄՆ նախագահական թեկնածուների բանավեճերի հիման վրա): Եվրասիա Միջազգային Համալսարան, Բանբեր, ԵՄՀ հրատ. Երևան, 2022, N 1, էջ 145-153 (համահեղինակ՝ Ս. Հակոբյան):
5. Male and female profanity in political discourse. Mesrop Mashtots University Bulletin. “Limush” print. Yerevan, 1(27), 2022. p. 269-274.
6. Gender differences in verbal and nonverbal aggression. Armenian Folia Anglistika, YSU, Yerevan, 2023, Vol. 19, 1 (27), p. 57-68 (համահեղինակ՝ Ա. Կնյազյան):
7. Linguistic manifestations of aggressive speech behaviour of male and female politicans in televised debates. Banber, Bulletin of Brusov State University, Linguistics and Philology, “Lingua” print. Yerevan, 2023, 1 (64), p. 162-173:

Луиза Марабян

Гендерная агрессия в теледебатах

Резюме

В данной диссертационной работе исследуются гендерные различия коммуникативной личности, отраженные в политических теледебатах. Гендерные исследования — новое направление армянского гуманитарного знания.

Цель работы заключается в выявлении и описании гендерных различий при использовании различных языковых средств, коммуникативных стратегий и тактик для выражения агрессии в политических теледебатах. Анализируются различные формы проявления агрессии в политической коммуникации, определяется взаимосвязь специфики речевой ситуации и пола и поведения ее участников.

Актуальность исследования. Современное общество сталкивается с проблемами, связанными с проявлениями агрессии и агрессивности. Традиционно агрессивность изучалась без учета пола. Несмотря на многочисленные исследования, проблема агрессивного поведения в политическом дискурсе по-прежнему актуальна. Актуальность нашего исследования состоит в изучении гендерной коммуникативной личности и анализе гендерных различий эмоциональной коммуникативной личности, отраженной в теледебатах.

Научная новизна исследования заключается в выборе объекта исследования, определяется постановкой основных задач и целей, В работе охарактеризованы стратегии и тактики проявления гендерных различий использования вербальных, невербальных и паравербальных средств выражения агрессии на материале политических теледебат, выявлены доминирующие стратегии и тактики в речи политиков, позволяющие выразить их интенции, определена роль контекста при репрезентации агрессии в политическом дискурсе.

Теоретическая значимость исследования заключается в углублении знаний по проблеме гендерных различий использования вербальных, невербальных и паравербальных средств выражения агрессии в политическом дискурсе, уточнении понятия *агрессия* и рассмотрения данного понятия с позиций речедеятельностного подхода и теории речевых актов. Настоящее исследование расширяет представление о понятии гендерной агрессии и вносит вклад в такие современные лингвистические науки, как лингвогендерология, конфликтология. прагмалингвистика, социолингвистика, психолингвистика.

Практическая значимость проведенного исследования заключается в том, что его результаты могут найти применение в спецкурсах по теории дискурса,

лингвогендерологии, социолингвистики, социокультурологии, психолингвистики, прагмалингвистики и конфликтологии.

Luiza Marabyan

Gender aggression in televised debates

Summary

This dissertation explores gender differences in male and female speech reflected in political televised debates. Gender research is considered as a new field in Armenian humanitarian studies.

The **purpose** of this research is to identify and explain gender differences in the use of various linguistic means, communicative strategies and tactics for expressing aggression in political televised debates. This study examines the diverse manifestations of aggression within political communication and explores the interrelationship between the communicative context, gender and behaviour of the participants.

The topicality of the dissertation. Modern society faces significant issues related to aggression and aggressiveness. Traditional studies often overlooked the role of gender in aggressiveness. Despite numerous investigations, the issue of aggressive behavior in political discourse remains pertinent. Our research is relevant because it investigates the impact of gender on communicative patterns and emotional expression in televised political debates.

The scientific novelty of this research lies in its focus on specific tasks and objectives. It examines the strategies and tactics used to highlight gender differences in verbal, non-verbal and paraverbal expressions of aggression in political televised debates. Additionally, it identifies the main strategies and tactics used by politicans to convey their intentions through speech. The research also explains how contextual factors influence the portrayal of aggression in political discourse.

The theoretical significance of the study aims to enhance scholarly understanding of gender differences in verbal, nonverbal and paraverbal communication of aggression within political discourse. It clarifies the concept of aggression by examining it through the lens of speech activity and speech communication theories. This research contributes to expanding the knowledge of gender aggression and enriches modern linguistic disciplines such as gender linguistics, conflictology, pragmalinguistics, sociolinguistics and psycholinguistics.

The practical significance of the study lies in its potential application in specialized courses on discourse theory, gender linguistics, sociolinguistics, sociocultural studies, psycholinguistics, pragmalinguistics and conflictology.